ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի որակը բնորոշում է մարդու գոյության և կյանքի բոլոր կողմերը, հանդիսանալով սոցիալ-տնտեսական, զարգացման հիմնական նախադրյալ, ինչպես նաև մարդկային զարգացման ցուցիչ, հասարակական կյանքի բազում ոլորտների համատեղ զարգացման արդյունք, ունենալով հիմնորոշող նշանակություն մարդկային գոյության ընկալման և դրսևորման համար: Գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացումը մարդկությանը նոր մարտահրավերներ են տալիս ապրանքների և ծառայությունների որակի բարձրացման, և դրանցով պայմանավորված մարդկային կյանքի սոցիալական, նյութական, և այլ պայմանների բարելավման համար:

Վերջին տասնամյակում գրեթե ամբողջ աշխարհում տնտեսական աճի բարձր տեմպերը չեն նպաստել կյանքի որակի մակարդակի բարձրացմանը, աղքատության կրճատմանը, այլ ընդհակառակը նկատվում է աղքատության խորացման միտումներ: Իրականում պատկերը հետևյալն է, որ սոցիալ-տնտեսական զարգացման առումով առաջատարներ են ոչ թե տնտեսական աճի բարձր տեմպեր ունեցող երկրները, այլ նրանք, որոնք ունեն կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի զարգացվածության բարձր մակարդակ: Հետևաբար, անհրաժեշտ է տնտեսական աճը ուղղել բնակչության կյանքի որակի վերարտադրությանը:Նշվածը հիմնավորում է կյանքի բարձր որակի դերի և ազդեցության բացահայտման անհրաժեշտությունը և այս հետազոտության արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ բնակչության կյանքի որակի կառավարման գործընթացում առկա հիմնախնդիրների լուծման համար կիրառվող մոտեցումների վերլուծությունն ու դրանց բարելավման ուղիների բացահայտումը:

Դրված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կյանքի որակի տեսական սկզբունքները և մեթոդաբանական հիմքերը,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշները և դրանց դինամիկան, բացահայտել դրանց կարգավորման հնարավոր եղանակները,
- ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել կյանքի որակի գնահատման միջազգային չափանիշներն ու բազմաբնույթ մոտեցումները,
- բացահայտել եկամուտների բաշխման և բնակչության սոցիալական շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, ներկայացնել՝ կարգավորման կառուցակարգերը,
- բացահայտել կյանքի որակի վրա սոցիալ-տնտեսական փոփոխությունները պայմանավորող գործոնները բազմաչափ վերլուծության միջոցով՝ վեր հանելով կառավարման ենթակա առկա հիմնախնդիրները,
- մշակել կյանքի որակի գնահատման նոր մոդել՝ համաթվի կառուցման միջոցով,
- գնահատել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող գործոնների ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա,
- մշակել քաղաքականություն իրականացնողներին ուղղված՝ ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման հիմնական ուղիներ, և պետական կարգավորման կառուցակարգեր:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտական աշխատանքում արված վերլուծությունների արդյունքներն ունեն մեթոդական, ներառական և կիրառական նշանակություն, որոնց հիմնական

արդյունքներն ու գիտական նորույթներն արտացոլվել են հետևյալ հիմնական դրույթներում.

- Մշակվել է գնաճի մակարդակի վերահսկման և պատասխանատվության համատեղ կառավարման մոդել՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված գնաճի և փաստացի մակարդակների համեմատության արդյունքում արձանագրված զգալի շեղումներից, որի դեպքում նախատեսվել է պատասխանատվություն այն անձանց նկատմամբ, ովքեր նպաստել են այս հիմնախնդրի առաջացմանը:
- Ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է մոդել՝ կանխատեսելու ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը՝ ռուս-ուկրաինական պատերազմի ՀՀ տնտեսության վրա 2022 թ.-ից հետո ունեցած դրական շոկերի բացակայության պայմաններում:
- Կլաստերային վերլուծության միջոցով խմբավորված քաղաքներում բացահայտվել են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների սպառման ու գնային ինդեքսների տարբերություններով, որպես կառավարման կառուցակարգ դիտարկվել է տարբերակված մոտեցում տարածքային զարգացման քաղաքականության մեջ՝ ուղղված ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման անհրաժեշտությանը:
- մշակվել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների հիման վրա՝ միավորելով միջազգային մասշտաբով և ՀՀ-ում առավել հաճախ օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումները: Համաթիվը կարող է օգտագործվել ինչպես ՀՀ, այնպես էլ ուսումնասիրված 100 երկրների բնակչության կյանքի որակի գնահատման համար (կշիռների փոփոխման պարագայում):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը շարադրված է 177 էջի վրա (առանց հավելվածների), բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Կյանքի որակը որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա»** գլխում ուսումնասիրվել է կյանքի որակ հակացությունը իր բնութագրիչների և բնորոշող գործոնների ամբողջականությամբ: Ընդհանրացնելով և դիտարկելով կյանքի որակի վերաբերյալ տեսաբանների տարաբնույթ մեկնաբանումները և սահմանումները, առանձնացվել է ատենախոսի կողմից ընդունելի կյանքի որակը հակիրճ բնութագրող գծապատկեր՝ այն ընդհանրացնելով համապատասխան սահմանմամբ: Մանրամասն վերլուծվել են կյանքի որակի սոցիալ-տնտեսական չափորոշիչների դինամիկան 10 տարվա կտրվածքով, որտեղ հետազոտությունների և վերլուծությունների արդյունքներից ելնելով, կյանքի որակի և կենսամակարդակի կառավարման համար առաջարկվել է գործիքակազմի մշակում որոշակի քաղաքականությամբ, որը կնպաստի հասարակությունում միջին խավի ձևավորմանը և եկամուտների բաշխման հավասարակշռմանը: Համեմատական վերլուծության համատեքստում ներկայացվել են կյանքի որակը բնութագրող մի շարք կառույցների մոտեցումներ՝ միջազգայնորեն ճանաչված և կյանքի որակի բնութագրման տեսանկյունից ընդունելի ստանդարտներ: Գլուխը եզրափակվել է նշելով ՀՀ-ում կարգավորման մի քանի մոտեցումներ և կառավարման կառուցակարգեր:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բնակչության կյանքի որակի վերլուծությունը և գնահատումը սոցիալ-տնտեսական գործոնների և ցուցանիշների հիման վրա»** գլխում ներկայացվել են կյանքի որակի գնահատման համաթվերի, ինչպես նաև այն ընդգրկող գործոնների տրամաբանությունը և կիրառման անհրաժեշտությունը: Վերլուծության է ենթարկվել ՀՀ և միջազգային լավագույն փորձի հիման վրա ստացված համաթվերի արդյունքները: Այս գլխում ատենախոսի կողմից հաշվարկվել է գնաճի փաստացի և ծրագրով նախատեսված մակարդակների շեղման չափը՝ ստանալով վնասի մեծությունը, որը կրել է հասարակությունը: Ռեգրեսիոն վերլուծության միջոցով մշակվել է մոդել, որը հնարավորություն կընձեռի հասկանալու,

թե Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքը ինչպիսի կախվածություն ունի Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ից, որքան է այդ կախվածության մակարդակը դրական շոկերի դուրս գալու արդյունքում: Գլուխը եզրափակվել է կլաստերային վերլուծությամբ, որը կարող է օգտագործվել կենսամակարդակի բարելավման նկատառումներով տարբեր քաղաքներում համապատասխան քաղաքականություն մշակելիս՝ որպես կառուցակարգ դիտարկելով ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աղքատության մակարդակի նվազեցման համար աշխատատեղերի ստեղծումը և տնտեսական ակտիվության բարձրացումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Բնակչության կյանքի որակի գնահատման և կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում բնակչության կյանքի որակը առավել ճշգրիտ բնութագրելու համար առաջարկվել է կյանքի որակի գնահատման նոր մեթոդ: Կյանքի որակի գնահատման համար կազմվել է համաթիվ՝ 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների միջոցով: Ատենախոսի կողմից հավաքագրվել են նաև 100 երկրների տվյալներ՝ կյանքի որակի գնահատման համաթվի կառուցման, այնուհետև ամբողջական արդյունքի մեկնաբանման համար:

Ատենախոսության վերջում՝ «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են ատենախոսության գլուխների հիմնական դրույթները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հեղինակի կողմից առանձնացված առաջին նորույթում նշվում է, որ օրենքի խախտման կամ օրենքի պահանջի չպահպանման հետևանքով, տնտեսական քաղաքականության մեջ անհրաժեշտ է պատասխանատվության կառուցակարգերի ներդնումը, որը կնպաստի գնաճի շեղումների վերահսկմանը և կանխարգելմանը: Կարծում ենք, որ մոդելի իրագործելիության տեսանկյունից կարևոր է դիտարկել, թե արդյոք պատասխանատվության մեխանիզմը նախատեսում է ուղղիչ գործողություններ, թե սահմանափակվում է միայն հետևանքային (հետադարձ) պատասխանատվությամբ:
2. Համեմատական վերլուծության համատեքստում հեղինակը ներկայացրել է կյանքի որակը բնութագրող մի շարք կառույցների մոտեցումներ՝ միջազգայնորեն ճանաչված և կյանքի որակի բնութագրման տեսանկյունից ընդունելի

ստանդարտներ: Կարծում ենք՝ աշխատանքում ներկայացված մոտեցումները գործնականում կարժևորվեին, եթե կյանքի որակի գնահատման միջազգային չափորոշիչների համեմատական վերլուծությանը զուգահեռ ներկայացվեր այդ ցուցանիշների տեղայնացման պայմանները, թե ինչ չափով և ինչ ուղղությամբ պետք է կիրառել: Սա ատենախոսությանը կհաղորդեր ոչ միայն կիրառական, այլև մեթոդաբանական նորարարական բնույթ:

3. Հեղինակի կողմից մանրամասն վերլուծվել են կյանքի որակի սոցիալ-տնտեսական չափորոշիչների դինամիկան և առաջարկվել է կյանքի որակի և կենսամակարդակի կառավարման համար գործիքակազմի մշակում որոշակի քաղաքականությամբ: Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության գնահատման արդյունքների հիման վրա առավել մանրամասն ներկայացվեր յուրաքանչյուր գործոնի հարաբերական նշանակությունը և դրանց առաջնահերթությունը կյանքի որակի կառավարման քաղաքականության տեսանկյունից:
4. Հետազոտության շրջանակներում նախատեսվել և մշակվել է կյանքի որակի գնահատման նոր մոդել՝ համաթվի կառուցման միջոցով, ինչը կարելի է գնահատել որպես աշխատանքի կարևոր բաղադրիչներից մեկը: Միևնույն ժամանակ, նպատակահարմար կլիներ առավել ընդգծել, թե առաջարկվող մոտեցումն ինչով է տարբերվում միջազգային պրակտիկայում կիրառվող համանման մեթոդաբանություններից և ինչ առավելություններ կարող է ապահովել Հայաստանի Հանրապետության պայմաններում կիրառման դեպքում:
5. Աշխատանքում տեղ են գտել որոշ տեխնիկական և խմբագրական բացթողումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները ամենևին չեն նվազեցնում ատենախոսության արդյունքների գիտական և կիրառական նշանակությունը: Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը կարելի է դիտարկել ինքնուրույն, գիտականորեն հիմնավորված, ամբողջական և պատշաճ իրականացված

հետազոտություն: Աշխատանքում իրականացված ակադեմիական գրականության ուսումնասիրությունը, մշակված կառուցակարգերը, օգտագործված տեսական և գործնական մոտեցումները գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:

Ատենախոսության հիմնական դրույթները և գաղափարները հրապարակված են 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համարժեքորեն արտացոլում է աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները:

Այսպիսով, Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՊՏՀ Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Լ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Լիանա Հայկազի Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ **Ն. Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ**

10 հուլիսի 2026 թ.